ւինատան միջոցով չոր ու ցամաք գրագրութեամբ։ Ժողովուրդն միշտ կարիք ունի հոգևոր պէտքերի և այլ կարևոր խնդիրների մասին անձամբ խօսել իւր առաջնորդի հետ—բայց հեռաւորութեան պատճառով հնարաւորութիւն չունի։ Շատ անգամ մի առաջնորդին փոխարինում է միւսը՝ թեմի հեռաւոր ժողովուրդը չէ տեսնում ոչ մէկին և ոչ էլ միւսին։ Մինչդեռ փոքր թեմում առաջնորդը հնարաւորութիւն կունենայ աւելի մօտիկ կերպով ծանօթանալ թեմի ժողովրդի կարիքներին, անձամբ կարգադրել դպրոցական և այլ եկեղեցական անյետաձգելի խնդիրներ, այլ և կատարել իւր բուն հովուական պարտքը—Աւետարանի Լուսոյ աղբիւրից կենդանի խօսքով յագեցնել խօսքի ծարաւ ժողովրդեան։ Այդ նոյն կարիքն նկատւում է նաև մեզանում, յուսով ենք մօտիկ ապագայում հնարաւոր կը լինի մեր Ռուսահայ թեմերի թիւը ևս շատացնել, գոնէ կրկնապատկելով։

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Տիեզերական ժողով։

Ամերիկայում ականաւոր հոգևորականների ընկերակցութիւնը մտածում է կազմել մի մինչև այժմ չեղած հսկայական Տիեզերական ժողով, որտեղ պէտք է լինի խորհրդակցութիւն հաւատի և եկեղեցու կազմութեան վերաբերեալ հարցերի շուրջը, մասնակցութեամբ աշխարհիս բոլոր կողմերի քրիստոնեայ եկեղեցիների ներկայացուցիչների։ Եկեղեցիների միութեան այդ միտքը ծագել է ամերիկական եպիսկոպոսական եկեղեցուց, որտեղ խօսուել և ընդունուել է 1910 թուականին հրաւիրած ժողովում։ Այդ կարևոր գաղափարի մշակութեան առթիւ կազմուել է առանձին յանձնաժողով, որը և բանակցութեան մէջ է մտել Ամերիկայում գոյութիւն ունեցող զանազան քրիստոնեայ ընկերակցութիւնների և ազանդների հետ։ Տիեզերական ժողով կազմելու նախագծին արդէն միացել են 35 ամերիկական կրօնական ընկերակցութիւններ։ Դրանից յետոյ բանակցութեան մէջ են մտել Անգլիայի, Իրլանդիայի և Շոտլանդիայի անգլիական եկեղեցու հետ։

Այդ նպատակով 1912 թ. ուղարկուել է Ամերիկայի եպիսկոպոսներից Անգլիա բանակցելու նոցա հետ, որտեղ նրանց պատասխան տալու համար կենտրոնների և Իսօրկի արքեպիսկոպոսների կողմից նշանակուել է յատուկ յանձնաժողով քննելու այդ հարցը։ Բացի դրանից երեք նշանաւոր Ամերիկացի եպիսկոպոսներ ուղարկուել են բանակցելու անգլիական այլ ազատ եկեղեցիների հետ, որ ապահովեն սրանց մասնակցութիւնը ապագայ ժողովին։

Տիեզերական ժողովը չպէտք է ունենայ ոչ օրէնսդրական իշխանութիւն և ոչ էլ պէտք է որ և է վճիռ անի, այլ պէտք է փնտռէ ընդհանուր հիմունքներ միացման համար, որոնք յետոյ պէտք է առաջարկուեն կրօնական համայնքներին ձեռք առնել համապատասխան գործողութիւններ։ Եպիսկոպոսների առաքելութիւնն անցել է յաջող և մինչև 20 անգլիական կրօնական ընկերակցութիւններ պատրաստակամութիւն են յայտնել մասնակցելու Տիեզերական ժողովին։

Ապա Ամերիկայի յանձնաժողովը որոշել է առաջիկայ ամառ կրեք եպիսկոպոսից բաղկացած մի պատգամաւորութիւն ուղարկել Եւրոպայի և Արևելքի բոլոր քրիստոնեայ դաւանութիւններին՝ առաջարկելու նրանց մասնակցել Տիեզերական ժողովին։ Իսկ այժմուանից Ամերիկայի խորհրդակցական յանձնաժողովը որոշել է հրատարակել ի լուր ամբողջ քրիստոնեայ աշխարհի հետևեալ կոչը։ (21 մարտի 1914 թ.)

«Բոլոր երկրներում գտնուած մեր քրիստոնեայ եղբայրներին ողջոյն։ Մենք, խորհրդակցական յանձնաժողովս, Միացեալ Նահանգների եկեղեցիների կողմից նշանակուած ներկայացուցիչներս, միացել ենք բողոքական եպիսկոպոսական եկեղեցու յանձնաժողովի հետ հաւատքի և կազմակերպութեան հարցերի վերաբերեալ տիեզերական համագումարի պատրաստութեան համար, ինչպէս միութեան առաջին քայլ։ Մենք հաւատում ենք, որ ամբողջ աշխարհում կայ միայն մէկ Աստուածային ժողովուրդ։ Մենք հաւատում ենք, որ ներկայ ժամանակը կրիտիկական է և յուսադրումենք, որ աշխարհը կը դառնայ քրիստոնէական։ Մենք հաւատում ենք, որ քրիստոնէութեան ներկայ աշխարհային լուծելու արժանի խնդիրները պահանջում են քրիստոնեաների համաշխարհային համագումար։ Այդ ձեռնարկութիւնը արդէն ստացել է քաջալերութիւն և աջակցութիւն քրիստոնէական եկեղեցիների նշանաւոր մասի, հնարաւոր կարճ ժամանակում առաջարկութիւններ կը լինեն և միւսներին, այնպէս որ մենք յոյս ունինք շուտով կասկածից վեր կը լինի համագումարի համաշխարհային ներկայացուցչական բնաւորութիւն ստանալը։ Նախապատրաստելով համագումարի հրաւէրը, մենք չունինք ոչ լիազօրութիւն, ոչ ցանկութիւն քննութեան առնելու այն կարևոր հարցերը, որոնք պէտք է քննուեն համագումարում։ Մեր անմիջական գործն է ձեռք առնել հնարաւոր միջոցներ, որպէս զի համագումարում խորհրդածութեան տրուելիք խնդիրների կանոնաւոր ընթացքը ապահովենք։ Մենք սակայն չենք կարող մեզ անտարբեր դէպի այն պայմանները, որ կարող են աջակցել կամ խանգարել այն մտադրութիւններն ու յոյսերը, որոնք պէտք է կատարուեն առաջիկայ տիեզերական համագումարի կողմ-

մից։ Ներկայ ժամանակում այդ կարևոր խնդիրներից մի քանիսը անսպասելի կերպով դարձել են նոր վէճի առարկայ։ Միսիոներական ասպարէզից վաղուց լուծելու սպասող միութեան խնդիրները բերուած են Աստուածային արհեստագիտութեամբ և դրուած են ուղիղ ճանապարհի վրայ բոլոր քրիստոնէական դաւանութեանց կողմից։ Որի կողքից անցնել այլ ևս անկարելի է։ Բոլոր քրիստոնեաների սրտին մօտիկ մեծ շահերը նորա վճռման համար են հրաւէր կարդում։ Բայց վճիռը չէ կարող լինել զիջողութեամբ։ Նորան ընդառաջ պէտք է դուրս գայ համագումարը։ Համագումարից առաջ պէտք է լինի հաշտութիւն։ Քրիստոսի առ աշխարհն ունեցած սէրը ստիպում է մեզ խնդրել Ձեզ միանալ մեզ հետ և Նորա բոլոր աշակերտների հետ և բոլոր քրիստոնեայ եկեղեցիների մէջ յայտարարել Աստուածային հաշտութիւն։ Այն հարցերը, որոնք մեզ յուզում են՝ թող ձևակերպուին պարզ և ազնիւ կերպ-վ։ Թող կաթոլիկ և բողոքական դիտումները իրենց պատմական հետախուզութիւններով ազատ լուսաւորեն, որչափ կարող են, այդ խնդիրները։ Մեզ համար էականապէս անհրաժեշտ է աշխատել հասկանալ, որ հէնց ուրիշների կրօնական փորձառութեան մէջ կայ իրական դնահատութիւն, որպիսինը նոքա չեն կամենում կորցնել, և որը պէտք է պահպանուի հաւատքի միութեան անտեսութեան մէջ։ Մենք նոյնպէս խնդրում ենք, որպէսզի բոլոր քրիստոնէական դաւանութիւնները խոյս տան ըստ հնարաւորութեան որ և է վիճելի դէպի ուրիշ եկեղեցիներն ունեցած առարկութիւնը յայտարարելուց, և ընդհակառակը որ ամենը խօսուի և անուի այնպէս, որպէս թէ արդէն պատրաստուում է բոլոր ազգերի և լեզուների ճշմարիտ աշակերտների ժողովը, որ աղօթեն Աստուածային Սուրբ Հոգու նոր բաշխման համար։ Մենք ցանկանում ենք՝ որ իւրաքանչիւր անդամ երբ առաջ է գալիս մեր մէջ անտարբերութիւն, կասկածանք և թիւրիմացութիւն՝ պահպանենք հաւատք առ այն, որ Տիրոջ աղօթքը Նորա աշակերտների միութեան համար ինչպէս է ունեցել, որ այդ միութիւնը կրկատարուի, և որ եկեղեցու կազմութեան մէջ անհնարին բան չպէտք է լինի. ինչպէս այդ լինում է պատութեան մէջ, երբ զանազան խառնուածքի և համոզմունքների տէր մարդիկ ապրում են միասին փոխադարձ համաձայնութեամբ ընդունած միութեան սկզբունքների համաձայն։ Ուստի մենք խնդրում ենք եկեղեցիներում ղեկավարող կամ կառավարող դիրք ունեցող բոլոր անձանց նեղութիւն կրեն անդադար աշխատել մշակելու մի գործնական պատուանդան միութեան ազատութեան, կարգ ու կանոնի, ճշմարտութեան, ոյժի և խաղաղութեան մէջ։ Այդ նպատակով և խնդրում ենք Ձեր աղօթքները։

Նախագահ՝ Վ. Ի. Մաքինդ

Քարտուղար՝ Ռոբերտ Գարդիներ.